

գրաստներ եւ արաբացի նժոյգներ նաեւ կը ճարէին մեր սասնցիք եւ կ'ելնէին իրենց լեռները, որ արդէն փախստականներով լեցուն էր եւ որ շրջակայից միմիայն ապահովութիւն մնացեր էր:

Բայց Յովնանու սիրտը հանգիստ չէր, գիշեր-ցերեկ զինքը խորհուրդ մը կը տանջէր, ճանապարհաց կիրճերը նստած քանի մը հոգուով եւ շարունակ տեղափոխուելով հարուած հարուածի վրայ կը բերեր թշնամեաց եւ զարմանալի հետաքրքրութեամբ կը տեղեկանար թէ ի՞նչ կընէ թշնամեաց զօրավարը, թէ որո՞նք են, որ միշտ իւր քով կը գան վին, թէ ի՞նչ կընէ Սմբատ Սպարապետ, թէ ի՞նչ կընէ իւր որդին Աշոտ, ի՞նչ կ'ընեն եւ ո՞ր են մատնիչ նախարարք եւ ազատք, որ Արծրունեաց Տէրը մատնեցին. եւ այս ամէն նիւթերուն վրայ լաւ, ճիշտ եւ մանրամասն տեղեկութիւններ կառնուր: Ականատես վկայներէ կ'իմանար, թէ Սմբատ սաստիկ դառնացեր էր Աշոտս մատնութեան վրայ եւ հաճոյանալով Բուղայի Վասպուրականի բոլոր գերիքն, բացի մեծամեծաց, յաջողէր էր ազատել եւ իւրաքանչիւր իր տեղը դարձնել: Եւ թէ այս հայրենասիրական գործողութիւնն ամենայն ճշտութեամբ կատարելու հսկեր էր: Եւ թէ նորա որդին՝ Աշոտ միշտ կը ջանար թշնամուոյն ներկայութենէն հեռու կենալ: Միւս կը սղմէն կ'իմանար, թէ Մուշեղ Վահեւունի եւ միւս երկու մատնիչ Վահրամներ Բուղայի բանակին մէջ իբրեւ բարեգործք եւ հաւատարիմք բարձրաւիճ կը պտրտէին:

Իր արշաւանքները անհանգիստ ըրին վերջապէս տաճկաց զօրավարը. եւ խիստ սլահպանութիւն հրամայեց ընել Խոյթի լեռներուն վրայ, բայց Յովնան նաեւ կը փոխէր իւր պատերազմի կերպը եւ շատ անգամ կը տեսնուէր արաբացի հագուստներով՝ Նոցայ դրօշակով կոտորած հասցնելու համար Նոցայ վրայ:

Բայց ի՞նչ էր Յովնանու ջանքը եղած ապականութեան հետ բաղդատեալ. գոյժ կը հասներ դարձեալ թէ Գուրգէն Արծրունի՝ եղբայր Աշոտոյ մեծ իշխանին թեպէտ մեծ յաղթութիւն կանգնելով ընդդէմ Բուղայի զօրավարաց Ռոսերանք գաւառին մէջ եւ հազար ութ հարիւր հոգի ջարդելով ի թշնամեաց, խաբուելով յիմարաբար